

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ՋԵՔԱՆՍՈՆԸ ԵՎ ՍՏՅՈՒՐԵՍՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՇՎԵԴԻԱՅԻ ԳՈՐԾԸ
CASE OF HEKANSON AND STURESSON v. SWEDEN

Դատարանի

1990թ. հունվարի 23-ի վճիռը

Ստրասբուրգ

Չեքանսոնի և Ստյուրեսոնի գործով,
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») հոդված 43-ի և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների, միստ գումարելով որպես Պալատ՝ հետևյալ կազմով՝ պրն Ռ. Ռիսդալ, Նախագահ, պրն Թոր Վիլհելմսոն, պրն Լ.Ե. Պետիտի, պրն Բ. Ուոլշ, պրն Ք. Ռուսո, պրն Ռ. Բերհանրոտ, տկն Ե. Պալմ, այդ թվում նաև պրն Մ.Ա. Էյսեն, Քարտուղար և պրն Յ. Պետցոլդ, Քարտուղարի տեղակալ
1989թ. սեպտեմբերի 29-ին և 1990թ. հունվարի 23-ին դռնփակ խորհրդակցություններից հետո
կայացրել է հետևյալ վճիռը՝ ընդունված վերջինս նշված տարեթվով:

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Դատարան է հանձնվել 1988թ. դեկտեմբերի 14-ին՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և 1989թ. հունվարի 27-ին՝ Շվեդիայի Թագավորության կառավարության («Կառավարություն») կողմից՝ համաձայն Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Գործը հարուցվել է պրն. Գոստա Չեքանսոնի և պրն Սունե Ստյուրեսոնի կողմից՝ 1984թ. ընդդեմ Շվեդիայի Հանձնաժողովին ներկայացրած գանգատի հիման վրա (թիվ 11855/85): Հանձնաժողովի խնդրանքը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Շվեդիան ճանաչել է Դատարանի իրավազորությունը (46-րդ հոդված): Խնդրանքի և Կառավարության գանգատի նպատակն էր Դատարանի կողմից որոշման կայացումն առ այն, թե գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 6, 13 և 14-րդ հոդվածներով և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ստանձնած պարտավորությունների խախտման մասին, թե՛ ոչ:

1. Ի պատասխան Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի համաձայն կատարված հարցման՝ դիմողները նշել են, որ ցանկանում են մասնակցել դատավարությանը և նշանակել են իրենց շահերը ներկայացնող իրավաբանի (30-րդ կանոն): 3. Որպես ex officio անդամներ Պալատում ընդգրկվել են տկն Ե. Պալմը՝ Շվեդիայից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված), և պրն Ռ. Ռիսդալը՝ Դատարանի նախագահ (21-րդ կանոնի 3-րդ կետ): 1989թ. հունվարի 26-ին Դատարանի նախագահը՝ Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս հինգ դատավորներին. պրն Թոր Վիլհելմսոն, պրն Լ.Ե. Պետիտի, պրն Բ. Ուոլշ, պրն Ռ. Բերնհարդտ և պրն Մ.Կ. Մարտենս (Կոնվենցիայի 43-րդ հոդված և Կանոնակարգի 21-րդ կանոնի 4-րդ կետ): Չետագայում պրն Ք. Ռուսոն՝ փոխարինող դատավոր, փոխարինել է պրն Մարտենսին (22-րդ կանոնի 1-ին կետ և 24-րդ կանոնի 1-ին կետ):

2. Պրն Ռիսդալն ստանձնել է Պալատի նախագահությունը (21-րդ կանոն 5-րդ կետ): Նա Քարտուղարի միջոցով ճշտել է Կառավարության

ներկայացուցչի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողների փաստաբանների տեսակետները՝ գրավոր ընթացակարգի կապակցությամբ (37-րդ կանոն, 1-ին կետ): Այնուհետև, համաձայն Նախագահի կարգադրության, Քարտուղարությունն ստացել է Կառավարության և դիմողների գրավոր բացատրությունները, համապատասխանաբար՝ 1989թ. հունիսի 31-ին և օգոստոսի 4-ին: Հանձնաժողովի քարտուղարը, սեպտեմբերի 5-ի նամակում տեղեկացրել է Քարտուղարին, որ պատվիրակը չի ցանկանում ներկայացնել գրավոր բացատրություն:

3. Քարտուղարի միջոցով խորհրդակցելով այն անձանց հետ, ովքեր պետք է ներկայանային Դատարան, Նախագահը, 1989թ. հունիսի 29-ին կարգադրել է, որ բանավոր ընթացակարգով դատաքննություն սկսվի 1989թ. սեպտեմբերի 25-ին (38-րդ կանոն): Սեպտեմբերի 22-ին Հանձնաժողովը ներկայացրել է տարբեր փաստաթղթեր՝ Քարտուղարության պահանջով, համաձայն Նախագահի կարգադրության:

4. Դատավարությունը տեղի է ունեցել Ստրասբուրգում, Սարդու իրավունքների պալատում, նշանակված օրը: Լսումներից անմիջապես առաջ Դատարանը գումարել է նախապատրաստական միստ:

Դատարան էին ներկայացել.

ա. Կառավարության անունից

պրն Յ. Քորել, դեսպան, իրավական և հյուպատոսական

գործերով քարտուղարի տեղակալ,

գործակալ,

պրն Ռ. Շտրոմբերգ, մշտական քարտուղարի տեղակալ և գլխավոր իրավաբան, Շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարարություն,

պրն Լ. Լինդշտրոմ, իրավախորհրդատու, Արդարադատության նախարարություն,

պրն Փ. Բոքվիստ, իրավախորհրդատու, Արտաքին գործերի նախարարություն,

խորհրդականներ,

բ. Հանձնաժողովի անունից պրն Բ. Լ. Ռոզակիս,

պատվիրակ,

գ. դիմողների անունից պրն Գ. Ռավնսբորգ, Լուսնի համալսարանի

իրավունքի դասախոս,

փաստաբան:

Դատարանը լսել է պրն Քորելի, պրն Ռոզակիսի և պրն Ռավնսբորգի ելույթները, ինչպես նաև դատարանի հարցերին Կառավարության պատասխանները:

Քարտուղարությունն ստացել է դիմողների պատասխանները՝ 1989թ. հոկտեմբերի 20-ին, և Կառավարության բացատրությունները՝ 1989թ. նոյեմբերի 20-ին: 1989թ. դեկտեմբերի 4-ին Նախագահը մերժել է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ Կառավարության խնդրանքը, իսկ 1992թ. հունվարի 23-ին Պալատը մերժել է դիմողների համանման խնդրանքը (40-րդ կանոնի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լ. Գործի հանգամանքները

Ա. 1979թ. հարկադիր աճուրդը

7. Պրն Գոստա Յեքանսոնը Հոորի բնակիչ է, ոստիկան, իսկ պրն Սունե Ստյուրետսոնը՝ Ֆագերհուլտի բնակիչ, ազարակատեր: 8. 1979թ. դեկտեմբերի 4-ին դիմողները Մարքարիդի քաղաքապետարանում տեղի ունեցած հարկադիր աճուրդում (exekutiv auktion, «1979թ. աճուրդ») 240000 շվեդական կրոն (SEK) գումարով գնել են Ռիսբոկե 1:3 գյուղատնտեսական հողամասը: Աճուրդում նրանց հիմնական մրցակիցներ պրն Բերտիլ Բյարնհագենը և պրն Միքայել Բորգը համապատասխանաբար առաջարկել են

250000 և 220000 SEK: Հողամասի վրա բռնագանձում էր տարածվել 1979թ. հուլիսին՝ նախորդ սեփականատերերի երեք բանկերում ունեցած պարտքերը վճարելու նպատակով: Աճուրդում հայտարարված գնահատման համաձայն՝ գույքի շուկայական արժեքը կազմել է 140000 SEK :9. Աճուրդում, համաձայն Քրոնոբերգի տեղական վարչական խորհրդի ներկայացուցչի կազմած արձանագրության, ներկաները տեղեկացվել են 1979թ. Հողամասերի ձեռքբերման մասին օրենքի 2-րդ բաժնի, 10-րդ ենթաբաժնի և 16-րդ բաժնի դրույթների մասին (jordforvarvslagen 1979:230, «1979թ. Օրենք»), ըստ որի՝ գնորդը պարտավոր էր գույքը վերավաճառել երկամյա ժամկետում, քանի դեռ դրա պահպանման վերաբերյալ թույլտվություն չէր ստացել Տեղական գյուղատնտեսական խորհրդից (landbruksnamnden), կամ եթե չէր ենթարկվում թույլտվության պայմանների ցանկում նշված որևէ բացառության (տես ստորև՝ կետեր 28 և 32): Դիմողները պնդել են, որ 1979թ. նոյեմբերի 27-ին Տեղական վարչական խորհրդի ներկայացուցիչը գույքի գնմության ժամանակ նշել է, որ այս դեպքում պահանջվող թույլտվությունն անհապաղ կտրամադրվի, այնուհետև նրանք պնդել են նաև, որ դա հաստատվել է աճուրդի ժամանակ՝ Տեղական վարչական խորհրդի կողմից: Այս պնդումները հիմնավորելու համար դիմողները ներկայացրել են երդմամբ հաստատված երեք վկայություն, որոնցից յուրաքանչյուրը 1989թ. ստորագրվել է այն անձանց կողմից, ովքեր ներկա են եղել կամ աճուրդին, կամ՝ գույքի գնմության ժամանակ: Գույքը պահպանելու թույլտվության համար դիմումները 10. 1980թ. հունվարի 7-ին Տեղական վարչական խորհուրդը կազմել է առուվաճառքի պայմանագիր, որում դիմողները հիշեցվել են 1979թ. Օրենքի 16-րդ բաժնի 1-ին կետի վերաբերյալ: Նույն օրը դիմողները դիմել են Տեղական գյուղատնտեսական խորհուրդ՝ Ռիսբոկե 1:3 հողամասը պահպանելու թույլտվության խնդրանքով: 11. 1980թ. փետրվարի 5-ի նամակում Տեղական գյուղատնտեսական խորհուրդը տեղեկացրել է դիմողներին, որ հողամասն ըստ իր չափերի, դիրքի և բնույթի համարվում է «ռացիոնալիզացման միավոր» (rationaliseringsfastighet), որը պետք է օգտագործվի այդ տարածքում գտնվող մյուս հողամասերը միավորելու և դրանց հետագա զարգացումն ապահովելու նպատակով: Նշել է նաև, որ դիմումը կարող է մերժվել համաձայն 1979թ. Օրենքի 4-րդ բաժնի 1-ին կետի 3-րդ ենթաբաժնի, քանի որ հարևանները շահագրգռված են այդ հողամասը ձեռք բերելու հարցում (տես ստորև՝ կետ 30): Տեղական գյուղատնտեսական խորհուրդը նաև նշել է, որ հիմքեր կան հավաստելու, որ վճարված գինը չափազանց բարձր է դրա հետգնման համար (inlösen- տես ստորև՝ կետ 34): 1980թ. փետրվարի 15-ին Տեղական գյուղատնտեսական խորհուրդը մերժել է դիմողների դիմումը՝ պատճառաբանելով, որ հողամասը «ռացիոնալիզացման միավոր է»: 12. Դիմողները դիմել են Ազգային գյուղատնտեսական խորհուրդ (lantbruksstyrelsen), որը նրանց գանգատը մերժել է 1980թ. սեպտեմբերի 5-ին: Իր որոշման մեջ Ազգային գյուղատնտեսական խորհուրդը նշել է հետևյալը. Ռիսբոկե 1:3-ը զբաղեցնում է 41 հեկտար տարածություն, որից 18 հեկտարը՝ անտառ, իսկ 8 հեկտարն արոտավայր է: Հողամասում ոչ մի շինություն չկա: Պրն Ստյուրետսոնի հողամասը, որ զբաղեցնում է 63 հեկտար անտառատարածք և 10 հեկտար արոտավայր, գտնվում է 25 կմ հեռավորության վրա: Հողամասը գնելով՝ դիմողները մտադիր էին այնտեղ կառուցել շինություններ, որոնք կարճ ժամանակում կստեղծեին աշխատանքային հնարավորություններ, իսկ հետագայում կհանդիսանային եկամտաբեր կարողություն իրենց զավակների համար: Այնուամենայնիվ, խորհուրդը նշել է, որ Տեղական գյուղատնտեսական խորհրդի կարծիքով, այդ տարածքում կարող է աշխատել միայն մեկ ագարակատեր: Եվ, վերջապես, պրն Միքայել Բորգը, որ վարձակալում էր հարևան երկու հողամասերը, որոնցից մեկն իր հոր սեփականությունն էր, շահագրգռված էր ձեռք բերել դիմողների հողամասը: Խորհուրդը եզրակացրել է. «Ազգային գյուղատնտեսական խորհուրդը կիսում է Տեղական գյուղատնտեսական խորհրդի կարծիքն այն մասին, որ տվյալ հողամասը, որպես առանձին մշակելի միավոր, չունի անհրաժեշտ նախապայմաններ:

Ավելին, Ազգային գյուղատնտեսական խորհուրդը գտնում է, որ տվյալ հողամասում նոր կառույցների տեղադրումն ամենայն հավանականությամբ կխոչընդոտի ազարակատիրոջ ակտիվ գործունեության զարգացմանն այդ տարածքում»:13. Դիմողները դիմել են Կառավարություն (Գյուղատնտեսության նախարարություն), որը գանգատը մերժել է 1981թ. փետրվարի 26-ին:14. 1982թ. հունվարի 4-ին նոր խնդրանքը՝ Ռիսբոկե 1:3-ը պահպանելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, մերժվել է Տեղական գյուղատնտեսական խորհրդի կողմից 1982թ. հունվարի 25-ին: Խորհուրդը նշել է, որ հողամասը համարվում է ռացիոնիլազացման նպատակների համար պիտանի և պետք է օգտագործվի այդ տարածքում գտնվող հողամասերը միավորելու և դրանց հետագա զարգացումն ապահովելու համար: Խորհուրդը նաև նշել է , որ պատրաստ չէ հողամասը հետ գնել 240000 SEK -ով:15. Դիմողները գանգատ են ներկայացրել Ազգային գյուղատնտեսական խորհուրդ: Ձևնության ենթարկելով հողամասը, վերջինս գանգատը մերժել է 1982թ. նոյեմբերի 15-ին՝ պատճառաբանելով, որ չի տեսնում իր նախկին որոշումից հրաժարվելու հիմնավոր հանգամանքներ:16. Կառավարությանն ուղղված՝ դիմողների հաջորդ գանգատը մերժվել է 1983թ. հոկտեմբերի 27-ին:17. 1985թ. հունվարի 11-ի նամակով դիմողները դիմել են Կառավարությանը՝ վերանայելու 1983թ. հոկտեմբերի 27-ի որոշումը: Կառավարությունը, հիշեցնելով, որ գործը վերջնական լուծում է ստացել 1983թ. հոկտեմբերի 27-ին, 1985թ. մարտի 14-ին որոշել է այլևս չանդրադառնալ այդ գանգատին:Գ. Յետգնման կապակցությամբ գործի վարույթը18. Դիմողները հայց են հարուցել Վեքսյոյի Անշարժ գույքի դատարան (fastighetsdomstolen)՝ պահանջելով, որ Կառավարությունը հետ գնի Ռիսբոկե 1:3-ը՝ համաձայն 1979թ. Օրենքի 14-րդ բաժնի (տե՛ս ստորև՝ կետ 34): 1981թ. դեկտեմբերի 11-ի իր վճռում դատարանը մերժել է հայցը՝ պատճառաբանելով, որ,ելնելով 14-րդ բաժնի հատուկ ձևակերպումից,այս դրույթը չի կարող համանմանությամբ կիրառվել դիմողների դեպքի նկատմամբ: Դիմողները դիմել են են Գոթայի վերաքննիչ դատարան (Gotahovratt), որը 1982թ. հուլիսի 1-ին հաստատել է Անշարժ գույքի դատարանի վճիռը: 1983թ. հուլիսի 14-ին Գերագույն դատարանը (hogstodomstolen) մերժել է գանգատի ընդունումը: Դ. 1985թ. հարկադիր աճուրդով վերավաճառքը 19. Տեղական գյուղատնտեսական խորհրդի պահանջով Տեղական վարչական խորհուրդը կարգադրել է 1985թ. նոյեմբերի 10-ին հարկադիր աճուրդով վերավաճառել Ռիսբոկե 1:3-ը, համաձայն 1979թ. Օրենքի 16-րդ և 17-րդ բաժինների դրույթների (տե՛ս ստորև՝ կետեր 36-38): Աճուրդի անցկացման համար պատասխանատու էր Վեքսյոյի հարկադիր կատարման ծառայությունը (kronofogdemyndigheten):20. 1984թ. փետրվարին և մարտին Անտառտնտեսության ազգային խորհուրդը (skogsvardsstyrelsen), համաձայն գների սահմանման կանոնակարգի գնահատել է հողամասը (հիմնականում հաշվի առնելով եկամուտը) 100000 SEK -ի չափով, և դրա շուկայական արժեքը՝ 200000 SEK-ը չգերազանցող գումար: 1984թ. ապրիլին Ռիբոս Քրոնոբերգի՝հողերի հարցերով ավագ տեսուչը (overlantmataren) կրկին գնահատել է հողամասը, որի վերջնական շուկայական արժեքը կազմել է 125000 SEK :21. 1984թ. ապրիլի 19-ին հարկադիր կատարման ծառայությունը հաստատել է, որ հողամասի արժեքը 125000 SEK է: Դիմողները բողոք են ներկայացնել Գոթայի վերաքննիչ դատարան, սակայն դատարանը մերժել է նրանց բողոքը 1984թ. հունիսի 4-ին՝ պատճառաբանելով, որ հնարավոր չէ բողոքարկել գնի սահմանումը, դա պարզապես նախապատրաստական քայլ է հողամասը վաճառելու մասին կայացվող որոշման համար (տե՛ս ստորև՝ կետ 39): Դիմողները բողոքարկել են այս որոշումը Գերագույն դատարան, որը բողոքի ընդունումը մերժել է 1984թ. օգոստոսի 23-ին:1984թ. հունիսի 26-ին, դիմողների խնդրանքով, Տեղական վարչական խորհուրդը նշանակել է երկու հատուկ մասնագետ՝ հողամասի գինը որոշելու նպատակով (տե՛ս ստորև՝ կետ 37): Վերջիններսը 1984թ. հոկտեմբերին իրենց զեկույցում նշել են , որ հողամասի շուկայական արժեքը 172000 SEK է՝ նկատի ունենալով անտառահատման համար

անհրաժեշտ ծախսերը (հիմնականում՝ եղևնիներ), որոնք տնկել էին դիմողները:22. Աճուրդը տեղի է ունեցել 1985թ. հունիսի 28-ին («1985թ. աճուրդ»): Հարկադիր կատարման ծառայությունը նշել է, որ հողամասի վերջնական շուկայական արժեքը 172000 SEK է, իսկ հարկային արժեքը՝ 107000 SEK : Որոշվել է, որ աճուրդի ժամանակ առաջարկվող նվազագույն գումարը պետք է լինի 172000 SEK: Իրականում աճուրդում եղել է միայն մեկ առաջարկ՝ 172000 SEK: Այն արել է Տեղական գյուղատնտեսական խորհուրդը և ընդունվել է Հարկադիր կատարման ծառայության կողմից պահելով աճուրդի գնահատման ծախսերը՝ դիմողներին է հանձնվել 155486.50 SEK :23. Նախքան 1985թ. հունիսի աճուրդը Տեղական գյուղատնտեսական խորհուրդ է ներկայացվել հողամասը ձեռք բերելու համար նախնական թույլտվության վերաբերյալ հինգ խնդրանք (տե՛ս ստորև՝ կետ 36): 1984թ. ապրիլին խորհուրդը բավարարել է պրն Միքայել Բորգի և պրն Թորվալդ Բորգի՝ աճուրդից երկու ամիս առաջ ներկայացրած խնդրանքները Ռիսբոկե 1:3-ը և նրանց սեփականությունը հանդիսացող հարևան երկու հողամասերը միավորելու վերաբերյալ: Խորհուրդը մյուս խնդրանքները մերժել է 1985թ. հունիսի 10-ին և 14-ին:24. 1985թ. հունիսի 19-ին դիմողները դիմել են Գոթայի վերաքննիչ դատարան հարկադիր վաճառքը չեղյալ հայտարարելու պահանջով: Նրանք բողոքել են, որ հողամասը չի վաճառվել օրենքով սահմանված շուկայական գնով, քանի որ 172000 SEK գնահատելը հիմնվել էր հողամասից ստացվող եկամտի գնահատման վրա: Դիմողները նշել են , որ մտադիր են դատարան ներկայացնել գնահատման նոր եզրակացություն: Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանը 1985թ. հուլիսի 3-ին մերժել է բողոքը:25. Դիմողները նոր գանգատով դիմել են Գերագույն դատարան, որում վիճարկել են երկու հատուկ տեսուչների անկողմնակալությունն այն հիմքով, որ գնահատման ժամանակ, համաձայն 1979թ. Հողամասերի ձեռքբերման կանոնակարգի 6-րդ բաժնի (տե՛ս ստորև՝ կետ 37), նրանք պարտավոր էին խորհրդակցել Տեղական գյուղատնտեսական խորհրդի հետ, որը տվյալ դեպքում հանդես էր գալիս որպես գնորդ: Նրանք չեն ներկայացրել որևէ գանգատ վերաքննիչ դատարանում հրապարակային լսումների բացակայության կապակցությամբ: 1985թ. օգոստոսի 20-ին Գերագույն դատարանը մերժել է բողոքի ընդունումը:26. 1985թ. դեկտեմբերի 17-ին Տեղական գյուղատնտեսական խորհուրդը վաճառել է հողամասը պրն Միքայել Բորգին և պրն Թորվալդ Բորգին 125000 SEK-ով: 1986թ. հունվարի 17-ին նրանք դիմել են այդ հողամասն իրենց երկու հողամասերի հետ միավորելու խնդրանքով՝ համաձայն հողամաս ձեռք բերելու թույլտվության (տե՛ս ստորև՝ կետ 23), և 1986թ. ապրիլի 11-ին այդ խնդրանքը բավարարվել է տեղական սեփականատիրության հարցերով գործակալության կողմից (fastighetsbildningsmyndigheten):II. Գործին առնչվող ներպետական օրենսդրությունը27. 1979թ. Հողամասերի ձեռքբերման մասին օրենքն ընդունվել է 1977թ. Ռիքսդագի կողմից ընդունված գյուղատնտեսական ծրագրերն իրականացնելու, ինչպես նաև անտառտնտեսության և տարածքային պլանավորման քաղաքականության նպատակներն իրագործելու համար: Օրենքը հատկապես հետապնդում էր հետևյալ նպատակները. ընտանեկան կենսունակ հողամասերն ամրապնդելու համար կապ ստեղծել և պահպանել մշակողի և հողի սեփականատիրոջ միջև, ինչպես նաև նպաստել գյուղատնտեսության և անտառտնտեսության շարունակական կառուցվածքային ռացիոնալիզացմանը:28. Օրենքի 1-ին բաժնի համաձայն՝ հարկային նպատակներով որպես գյուղատնտեսական հողամաս գնահատված, հողամաս ձեռք բերելու համար պահանջվում է թույլտվություն: 2-րդ բաժնի նախատեսում է մի շարք բացառություններ, օրինակ, երբ հողամասը ձեռք է բերում է պետական մարմինը՝ ոչ առևտրական նպատակներով, թույլտվություն չի պահանջվում (ենթաբաժին 2), այն չի պահանջվում նաև աճուրդով հարկադիր վաճառքի դեպքում (ենթաբաժին 10), եթե այն չի անցկացվել Օրենքի 17-րդ բաժնի

համաձայն (տե՛ս ստորև՝ կետ 37):29. Թույլտվության վերաբերյալ դիմումների կապակցությամբ որոշում ընդունելիս՝ իշխանությունները պետք է նկատի ունենան, որ անհրաժեշտ է նպաստել գյուղատնտեսության և այգեգործության ոլորտներում ռացիոնալ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմանը և զարգացմանը:30. 4-րդ բաժնի 1-ին կետը նախատեսում է, որ հողամասի ձեռքբերման թույլտվությունը պետք է մերժել, *inter alia*.«1. Եթե գինն աննշան չափով գերազանցում է հողամասի արժեքը, դրա եկամտի կամ այլ հանգամանքների տեսանկյունից,2. Եթե կարող է ընդունվել, որ հողամասի ձեռքբերումը հիմնականում իրականացվում է որպես ներդրում,3. Եթե հողամասն անհրաժեշտ է գյուղատնտեսության կամ անտառտնտեսության ռացիոնալիզացման համար...»:4-րդ բաժնի 2-րդ կետը նախատեսում է, որ 1-ին կետի 1-ին ենթաբաժինը չի վերաբերում հարկադիր աճուրդում հողամասերի ձեռքբերմանը, համաձայն Օրենքի 17-րդ բաժնի (տե՛ս ստորև՝ կետ 36):31. 12-րդ բաժնին ընդգծում է, որ հողամասի ձեռքբերման թույլտվությունը սկզբունքորեն պետք է հայցել նախքան առքը՝ երեք ամսվա ընթացքում: Համաձայն այս բաժնի՝ թույլտվություն տրամադրելու հարցը չի կարող քննվել մինչև ձեռքբերումը, բացառությամբ որոշակի հանգամանքների, որոնցից ոչ մեկը չի ծագել 1979թ. աճուրդում:Այնուամենայնիվ, համաձայն 17-րդ բաժնի՝ հրապարակային աճուրդի դեպքում, ինչպիսին էր 1985թ. տեղի ունեցած աճուրդը, թույլտվությունը պետք է տրամադրվեր նախքան աճուրդը:32. 16-րդ բաժնի առաջին կետի համաձայն, այսպիսի հանգամանքներում ձեռք բերված հողամասը , որը սովորական գնման դեպքում (տե՛ս վերը՝ կետ 28) կպահանջեր թույլտվություն, պետք է վերավաճառվի երկու տարվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքները դադարել են գոյություն ունենալուց, կամ գնորդը Տեղական գյուղատնտեսական խորհրդից ձեռք է բերել հողամասը պահպանելու թույլտվություն: Նման թույլտվության տրամադրումը, *inter alia*, կատարվում է 3-րդ և 4-րդ բաժինների հիման վրա, բացառությամբ 4-րդ բաժնի

1-ին ենթաբաժնի: 33. Տեղական գյուղատնտեսական խորհուրդի որոշումը՝աճուրդում ձեռք բերված հողամասը պահպանելու թույլտվություն չտրամադրելու մասին, կարող է բողոքարկվել Ազգային գյուղատնտեսական խորհուրդ, իսկ այնուհետև՝ Կառավարություն:34. Եթե առքը համարվում է անվավեր այն հիմքով որ մերժվել է անհրաժեշտ թույլտվությունն ըստ 4-րդ բաժնի 1-ին կետի , 3-րդ ենթաբաժնի, այսինքն այն հիմքով, որ հողամասը ծառայելու է գյուղատնտեսության և անտառտնտեսության ռացիոնալիզացման նպատակներին, ապա, համաձայն 14-րդ բաժնի, պետությունը «պարտավոր է հետ գնել հողամասը առքի համաձայնեցված գնով, եթե այդպես է պահանջում վաճառողը»:Այնուամենայնիվ, նույն բաժնի համաձայն, նման պարտավորություն չի գործում, եթե առքի արժեքն աննշան չափով գերազանցում է հողամասի արժեքը՝ եկամտի կամ այլ հանգամանքների տեսանկյունից, կամ եթե մյուս պայմանները ողջամիտ չեն:Պետությունը չի կրում հարկադիր աճուրդում ձեռքբերված գույքը հետ գնելու պարտավորություն, քանի որ նման դեպքում գույքն օրինական կարգով ձեռք բերելու թույլտվություն չի պահանջվում (տե՛ս վերը՝ կետեր 18 և 28):35. Համաձայն 14-րդ բաժնի 2-րդ կետի՝ հողամասը հետ գնելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են Անշարժ գույքի հարցերով դատարան, որի որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան, և այնուհետև՝ Գերագույն դատարան՝ եթե բողոքարկումը թույլատրվի:36. Եթե այն դեպքում, երբ դա պահանջվում է 16-րդ բաժնի համաձայն, (հողամասը չի վերավաճառվել սահմանված ժամկետում, Տեղական վարչական խորհուրդը՝ համաձայն նույն բաժնի և Տեղական գյուղատնտեսական խորհրդի դիմումի, կարգադրում է , որ հողամասը վաճառվի հարկադիր աճուրդում՝ հարկադիր կատարման ծառայության կողմից՝ համաձայն 17-րդ բաժնի: Նման աճուրդի ժամանակ հողամասը կարող է վաճառվել միայն այն անձին, ով ստացել է այն ձեռք բերելու թույլտվություն (տե՛ս վերը՝ կետ 31), կամ նրան, ով ազատված է թույլտվության պահանջից, ինչպես օրինակ, Տեղական

գյուղատնտեսական խորհուրդը՝ ըստ 1979թ. Օրենքի 2-րդ բաժնի (տե՛ս վերը՝ կետ 28):37. 17-րդ բաժինը նախատեսում է, որ հարկադիր աճուրդում վաճառքը հնարավոր է այն դեպքում, եթե առաջարկված առքի գինն առնվազն հավասար է գույքի կատարողական օրենսգրքի գլուխ 12-ի դրույթների համաձայն որոշված արժեքին, (utsokningsbalken) (տե՛ս վերը՝ կետ 3): 1979թ. Օրենքի 17-րդ բաժնի համաձայն՝ այս արժեքը որոշում է հարկադիր կատարման ծառայությունը կամ եթե սեփականատերը դիմում է հատուկ գնահատման պահանջով, ապա արժեքը որոշում են Տեղական վարչական խորհրդի կողմից նշանակված հատուկ տեսուչները: Երկու դեպքում էլ գնահատումը հարկ է կատարել՝ խորհրդակցելով Տեղական գյուղատնտեսական խորհրդի հետ (1979թ. Հողամասերի ձեռքբերման մասին օրենք, 6-րդ բաժին, jordforvsforordningen 1979:231՝ հաստատված Կառավարության կողմից):38. 17-րդ բաժինը նախատեսում է նաև, որ եթե գույքը չի վաճառվել աճուրդում, Տեղական գյուղատնտեսական խորհուրդը կարող է երկամյա ժամկետում դիմել Տեղական վարչական խորհուրդ՝ նոր աճուրդ կազմակերպելու պահանջով: Եթե նման պահանջ չի ներկայացվում, կամ եթե երկրորդ աճուրդի ժամանակ նպատակահարմար գումար չի առաջարկվում, ապա սեփականատերերից այլևս չի պահանջվում վաճառել գույքը:39. Համաձայն Օրենսգրքի 18 –րդ գլխի, 1-ին բաժնի՝ հարկադիր աճուրդի մասին հարկադիր կատարման ծառայության կայացրած որոշումները կարող են գանգատարկվել վերաքննիչ դատարան, և այնուհետև՝ Գերագույն դատարան, եթե գանգատ ներկայացնելը թույլատրվի:Սակայն, համաձայն նույն գլխի 6-րդ (2) բաժնի, եթե որոշումը սոսկ նախապատրաստական քայլ է վերջնական որոշում կայացնելու համար , ապա գանգատն, ընդհանուր առմամբ, պետք է առնչվի վերջինիս:Գանգատները ներկայացվում են 1942թ. Դատավարության օրենսգրքի նորմերի հիման վրա (rattegangsbalken), որքանով վերաբերում են այս գանգատներին (Օրենսգիրք, 18-րդ գլուխ, 1-ին բաժին): Օրենսգրքի 52-րդ գլխի 10-րդ բաժինը նախատեսում է.

«Եթե գործի քննության նպատակով անհրաժեշտ է, որ վերաքննիչ դատարանը լսի մի կողմին կամ որևէ այլ անձի, վերաքննիչ դատարանը որոշում է անցկացնել նման լսումներ, եթե դրանք անհրաժեշտ է համարում:

Եթե վերաքննիչ դատարանը որոշում է անցկացնել նման լսումներ, ապա նման լսումները դռնբաց են՝ համաձայն Դատավարության օրենսգրքի 5-րդ գլխի 1-ին բաժնի»:ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

40. Հանձնաժողովին ուղղված 1984թ. ապրիլի 3-ի իրենց գանգատում (թիվ. 11855/85) պրն Հեքանսոնը և պրն Սոյուրեսոնը բողոքել են Կոնվենցիայի 6, 13 և 14-րդ հոդվածների և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումների դեմ:41. 1987թ. հուլիսի 15-ին Հանձնաժողովն ընդունելի հայտարարել է գանգատը, բացառությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածին առնչվող երկու գանգատների: Առաջինը վերաբերում էր այն փաստին, որ դատարանները չէին կարգադրել պետությանը հետ գնել գույքը, իսկ երկրորդը՝ որ Գերագույն դատարանը չէր անցկացրել հրապարակային լսումներ, երբ 1989թ. որոշել էր դիմողներին չթույլատրել բողոք բերել նույն տարում կազմակերպված հարկադիր աճուրդի դեմ:1988թ. հոկտեմբերի 13-ի իր գեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովն արտահայտել է հետևյալ տեսակետը.Ա. թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել ո՛չ առանձին վերցրած (տասը ձայնով՝ ընդդեմ երկուսի), ո՛չ կապված դիմողների այն գանգատի հետ, թե պետությունը հողամասն իրենց է վաճառել 1979թ. հարկադիր աճուրդում՝ 240000 SEK -ով, այնուհետև մերժել է հողամասը պահպանելու թույլտվությունը և, վերջապես, գույքը հետ է գնել 1985թ. հունիսին կայացած նոր հարկադիր աճուրդում՝ 172 000 SEK -ով:Բ.Տեղի է ունեցել 6-րդ հոդված երկու խախտում: Առաջին խախտումը տեղի է ունեցել դիմողներին հողամասը պահպանելու թույլտվության տրամադրումը մերժելու վերաբերյալ վեճի կապակցությամբ 6-րդ հոդվածի պահանջները բավարարող ընթացակարգի բացակայության արդյունքում

(միաձայն), իսկ երկրորդն առնչվում է այն հանգամանքին, որ Գոթայի վերաքննիչ դատարանը չի անցկացրել հրապարակային լսումներ, երբ վճիռ է կայացրել դիմողների 1985թ. աճուրդի դեմ ներկայացված գանգատի վերաբերյալ (յոթ ձայնով՝ ընդդեմ հինգի): Գ. Անհրաժեշտություն չկա գործը քննել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ (միաձայն):

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

42. Ըստ դիմողների՝ Ռիսբոկե 1:3-ը պահպանելու թույլտվության մերժումը, 1985թ. հարկադիր աճուրդում հողամասի վաճառքը և այդ վաճառքի պայմանները թիվ 1 Արձանագրության 1-ն հողվածով սահմանված նրանց իրավունքների խախտում է, որտեղ ասվում է.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»: Ե՛վ Կառավարությունը, ե՛ւ Հանձնաժողովն առարկել են այս պնդումների դեմ: 43. Անվիճելի է, որ վիճարկվող միջոցառումները հանդիսանում են միջամտություն դիմողների՝ իրենց գույքից անարգել օգտվելու իրավունքին, կամ որ նման միջամտությանը համարվում է սեփականությունից զրկում և, հետևաբար, պետք է քննվեր թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա: Ա. Միջամտության օրինականությունը և նպատակը 44. Այս գործում միջամտության նպատակը նշված է 1979թ. Օրենքի 4-րդ բաժնի 1-ին կետի 3-րդ ենթաբաժնում, այն է, խթանել գյուղատնտեսության ռացիոնալիզացումը (տե՛ս վերը՝ կետեր 11-17 և 30): Սա, անկասկած, օրինական «հանրային շահ» է՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար, նույնիսկ եթե 1-ին հոդվածը նախատեսում է փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի (տե՛ս mutatis mutandis, Ջեյմսի և այլոց գործով 1985թ. փետրվարի 21-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 98, էջ 30-32, կետեր 39-45): 45. Դիմողները չեն վիճարկել ինքնին իրավունքի նպատակը: Այնուամենայնիվ նրանք պնդել են, որ շվեդական օրենսդրությունը թերի է, որովհետև «գնահատման ողջ բյուրոկրատական համակարգը, որ նախատեսում են Հողամասերի ձեռքբերման մասին օրենքը և Հողամասերի ձեռքբերման կանոնակարգը, և որը կիրառվել է հրապարակային աճուրդից հետո՝ երբ ազատ շուկայական գնով, ինչպես պրն Հեքանսոնի և պրն Ստյուրետսոնի դեպքում, թվում է լիովին անընդունելի իրավական պետության տեսանկյունից»: Ավելին, դիմողները պնդել են, որ իրենց դեպքում կիրառված վիճարկվող միջոցառումները (տե՛ս վերը՝ կետ 42) չեն հետապնդել որևէ իսկական «հանրային շահ», ինչպես այս արտահայտությունը պետք է ընկալել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, և դրանք հանդիսանում են իշխանության չարաչափան լուրջ դեպքեր, և ավելին, նրանք ժխտել են, որ իրենց հողամասն իրականում հանդիսանում է «ռացիոնալիզացման միավոր»՝ համապատասխան օրենսդրության իմաստով (տե՛ս վերը՝ կետեր 11-17), և առարկել են 1985թ. հարկադիր վերավաճառքի և դրա պայմանների օրինականության դեմ: 46. Կոնվենցիայի 25-րդ հոդված համաձայն՝ ներկայացված գանգատի հիման վրա հարուցված գործի վարույթում Դատարանը պարտավոր է հնարավորին չափ սահմանափակվել ներկայացված կոնկրետ գործի քննությամբ: Հետևաբար,

Դատարանը կոչված չէ in abstracto վերանայելու 1979թ. Օրենքի համակարգը, այլ պետք է որոշի, թե արդյոք այդ համակարգը կիրառվել է այնպես կամ դիմողների համար այնպիսի ազդեցություն է ունեցել, որ հանգեցրել է Կոնվենցիայի խախտման (տե՛ս, inter alia, Էրիքսոնի գործով 1989թ. հունիսի 22-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 156, էջ 23, կետ 54):47. Ինչ վերաբերում է վիճարկվող միջոցառումների օրինականությանը, Դատարանը կրկնում է որ ներպետական օրենսդրության հետ համապատասխանությունը վերանայելու իր լիազորությունները սահմանափակ են (տե՛ս, inter alia, Ալան Ջեքոբսոնի 1989թ. հոկտեմբերի 25-ի գործով վճիռը: Շարքեր Ա, թիվ 63, էջ 17, կետ 57 և, mutatis mutandis, վերը նշված Էրիքսոնի վճիռը: Շարքեր Ա, թիվ 156, էջ 25, կետ 65): Տվյալ գործում ներկայացված ապացույցներից չի հետևում, որ իրականում իշխանությունները մտահոգված չեն գյուղատնտեսության ռացիոնալիզացմամբ՝ հողամասը հարևան հողամասերի հետ միավորելու միջոցով, փաստորեն, Տեղական գյուղատնտեսական խորհուրդը Ռիսբոկե 1:3-ը վաճառել է Բորգ եղբայրներին այն պայմանով, որ նրանք իրենց երկու հողամասերը կմիավորեն դրա հետ, ինչպես որ նրանք արել են (տե՛ս վերը՝ կետ 26): Ավելին, Գոթայի վերաքննիչ դատարանը պաշտպանել է 1985թ. հարկադիր վերավաճառքին առնչվող որոշումները, իսկ Գերագույն դատարանը մերժել է թույլատրել զանգատի ընդունումը (տե՛ս վերը՝ կետեր 24-25): Այսպիսով, և՛ Դատարանը, և՛ Հանձնաժողովն ընդունել են, որ վիճարկվող միջոցառումները կիրառվել են շվեդական օրենսդրության, մասնավորապես, 1979թ. Օրենքի դրույթների համաձայն:48. Դիմողները բողոքել են նաև, որ իրավական պետության տեսանկյունից անընդունելի են որոշ վարչական գործողություններ, որոնք համաձայն 1979թ. Օրենքի կիրառվել են իրենց գործի առնչությամբ: Ըստ նրանց՝ Տեղական վարչական խորհրդի ներկայացուցիչները 1979թ. աճուրդում հաստատել են , որ գնորդը որևէ դժվարություն չի ունենա հողամասը պահպանելու համար անհրաժեշտ թույլտվություն ձեռք բերելու հարցում, մինչդեռ, արդյունքում՝ Տեղական գյուղատնտեսական խորհուրդը դիմողներին մերժել է այդ թույլտվությունը: Սա, վարչակազմի կողմից «երկերեսանիություն» է, ամդել են նրանք: Դատարանն այս պատճառաբանությունը համոզիչ չի համարում: Անգամ ընդունելով, որ 1979թ. աճուրդի կապակցությամբ ինչ որ հայտարարություն է արվել Դատարանին չի բավարարում այն փաստը, որ դիմողները կարող են հայտարարությունը ողջամտորեն պարտադիր համարել շվեդական իրավունքի համաձայն: Երկրորդ հակառակը՝ այդ աճուրդի արձանագրությունն, աներկբայորեն, ցույց է տալիս, որ աճուրդի մասնակիցներն զգուշացված էին թույլտվության անհրաժեշտության մասին, և որ դիմողները, ավելին, ստորագրել են մի պայմանագիր, որում հստակ ասված է, որ հողամաս ձեռք բերելու իրավունքը ենթակա է նույնանման թույլտվության (տե՛ս վերը՝ կետեր 9 և 10):49. Ինչ վերաբերում է իրական գնահատմանը, որ կատարվել է 1979թ. Օրենքի համաձայն, Դատարանը որևէ հիմք չի տեսնում՝ կասկածի տակ առնելու համար երկու հատուկ գնահատող տեսուչների անաչառությունը, որոնք որոշել էին վերջնական գին 172000 SEK (տե՛ս վերը՝ կետեր 21 և 37):50. Վիճարկվող միջոցառումները, այսպիսով, ունեն օրինական նպատակ և օրինական են թիվ Արձանագրության 1 հոդվածի նպատակների համար: Բ. Միջամտության համարժեքությունը 51. Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը նաև պահանջում է , որ կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև պետք է գոյություն ունենա հիմնավորված համամասնական հարաբերակցություն: Պահանջվող համամասնությունը բացակայում է , եթե շահագրգիռ անձն ստիպված է եղել կրելու «անհատական և չափից ծանր բեռ» (տե՛ս, inter alia, Լիրգոուն և այլոք 1986-ի հուլիսի 8-ի գործով վճիռը: Շարքեր Ա, թիվ 102, էջ 50, կետ 120):52. Դիմողներն այս կապակցությամբ նախ և առաջ բողոքել են, որ 1979թ. Օրենքով սահմանված, գների վերահսկման համակարգը, ըստ էության, խախտում է համամասնության սկզբունքը, քանի որ, հարկադիր աճուրդում գյուղատնտեսական հողամաս գնած անձն օրենքի սահմաններում հնարավորություն չունի պաշտպանելու

իրեն՝ ընդդեմ իշխանությունների կողմից վերավաճառքի գնի սահմանման այն դեպքում, երբ իշխանությունները մերժում են հողամասը պահպանելու անհրաժեշտ թույլտվությունը: Ինքնապաշտպանության բացակայությունը, դիմողների պնդմամբ, ամենալուրջն է՝ իրավիճակը սխալ ներկայացնելու առումով (տե՛ս վերը՝ կետ 48), և ըստ 1979թ. Օրենսգրքի 6-րդ բաժնի՝ վերավաճառքի նպատակով գույքի գնահատումն անհրաժեշտ է կատարել՝ խորհրդակցելով Տեղական գյուղատնտեսական խորհրդի հետ (տե՛ս վերը՝ կետ 37): Այս կապակցությամբ, Դատարանը հիշեցրել է, որ գների վերահսկման համակարգը, in abstracto վերանայելն իր պարտավորությունը չէ (տե՛ս վերը՝ կետ 46):⁵³ Թե արդյոք տվյալ գործի առնչությամբ գների վերահսկման համակարգը բարձրացրել է համամասնության վերաբերյալ հարց, Դատարանը նշել է հետևյալը. 1979թ. դիմողները որոշել են հողամասի դիմաց առաջարկել 240000 SEK, մինչդեռ դրա շուկայական արժեքը գնահատված էր ընդամենը 140000 SEK

(տե՛ս վերը՝ կետ 3): Բացի դրանից, 1979թ. Օրենքում հստակորեն ասվում է, որ այն անձը, ով գնում է գյուղատնտեսական նշանակության հողամաս (որոշ բացառություններով, որոնք այս գործին չեն առնչվում, (տե՛ս վերը՝ կետ 32) հարկադիր աճուրդում պետք է ստանա թույլտվություն, որպեսզի կարողանա տվյալ հողամասը պահպանել ավելի քան երկու տարի: Նախքան աճուրդը հնարավոր չէ ստանալ որևէ պարտավորեցնող հայտարարություն առ այն, թե այդ թույլտվությունն ամենայն հավանականությամբ կարելի է ձեռք բերել (տե՛ս վերը՝ կետ 31): Ուստի ապագա գնորդները պետք է լավ գիտակցեն այն ռիսկը, որ կարող էին երկու տարվա ընթացքում ստիպված լինեն վերավաճառելու հողամասը՝ 1979թ. Օրենքով սահմանված պայմաններով: Դիմողները պնդել են որ իրենք նման ռիսկի չէին դիմի՝ նկատի ունենալով իշխանությունների ենթադրյալ հավաստիացումները՝ կապված 1979թ. աճուրդի հետ (տե՛ս վերը՝ կետ 9): Այս պնդումը, այնուամենայնիվ, արդեն մերժվել է Դատարանի կողմից (տե՛ս վերը՝ կետ 48):⁵⁴ Հողամասի դիմաց դիմողները վերջիվերջո ստացել են 155486.50 SEK (տե՛ս վերը՝ կետ 22), ինչը զգալիորեն պակաս էր իրեց վճարած առքի գնից: Այս թիվը կազմում է հողամասի գնահատված շուկայական արժեքը՝ 172000 SEK, որ նշանակել էին հատուկ տեսուչները չհաշված գնահատման և հարկադիր աճուրդի ծախսերը: Որևէ հիմնավոր ապացույց չկա, թե գնահատումը, կամ 1985թ. աճուրդին վերաբերող մեկ այլ որոշում չի համապատասխանում 1979թ. Օրենքին (տե՛ս վերը՝ կետ 47): Հաշվի առնելով թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներպետական իշխանություններին վերապահված գնահատման ազատության սահմանումը, Դատարանը համաձայնում է Հանձնաժողովի հետ, որ դիմողների ստացած գինը կարող է համարվել, որ հիմնավոր կերպով վերբերում է հողամասի արժեքին:⁵⁵ Վերջին հաշվով, և հատկապես նկատի ունենալով այն ռիսկը, որին մտածված գնացել էին դիմողները՝ գնելով Ռիսթոկե 1:3-ը, տվյալ գործում, նրանց չեն հարկադրել իրենց վրա վերցնել անհատական կամ չափից ավելի ծանր բեռ:⁵⁶ Եզրակացություն⁵⁶. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված խախտում տեղի չի ունեցել:

II. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված վիճարկվող խախտումը

57. Հիմնվելով Կոնվենցիայի 14-րդ հոդված և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վրա՝ դիմողները պնդել են, որ իրենք հանդիսացել են խտրականության զոհ 1979թ. աճուրդում հողամասը վերավաճառողների, 1985թ. աճուրդում գնորդ հանդիսացող Տեղական գյուղատնտեսական խորհրդի և վերջին գնորդներ՝ Բորգ Եղբայրների համեմատությամբ: Դատարանը չի ընդունել այս փաստարկը, որը հիմնավորված չէ որևէ ապացույցով:

III. Կոնվենցիայի 6-րդ հոդված 1-ին կետի վիճարկվող խախտումը

58. Դիմողները նաև գանգատ են ներկայացրել առ այն, որ չեն ունեցել դատական պաշտպանության հնարավորություն բողոքարկելու համար հողամասը պահպանելու թույլտվությունը մերժելու մասին Կառավարության որոշումը, և վերաքննիչ դատարանում չեն անցկացվել հրապարակային լսումներ: Նրանք սա դիտել են որպես 6-րդ հոդված 1-ին կետի երկակի խախտում, որում ասվում է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից (...) արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը, կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, Դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»: Ա. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը 59. Կառավարությունը վիճարկել է 6-րդ հոդված 1-ին կետի կիրառելիությունը: Առաջին հերթին կառավարությունը պնդել է, որ հողամասի նկատմամբ դիմողների իրավունքը սահմանափակված է երկամյա ժամկետով՝ ոչ միայն օրենքով, այլ նաև համաձայնությամբ, քանի որ դիմողները ընդունել էին 1979թ. աճուրդի պայմանները: Հետևաբար, ոչ հողամասը պահպանելու թույլտվությունը, ոչ 1985թ. հարկադիր վերավաճառքին առնչվող որոշումները չեն կարող համարվել դիմողների «քաղաքացիական իրավունքների» վերաբերող:

Որպես այլընտրանք՝ Կառավարությունը նշել է, որ 1979թ. աճուրդի պայմաններին համաձայնելով, դիմողները հրաժարվել են Դատարան դիմելու իրենց իրավունքից և ընդունել, որ անհրաժեշտ թույլտվություն ձեռք բերելու իրենց հնարավորությունները պետք է քննվեն միայն վարչական մարմինների կողմից, ինչպես սահմանված է օրենքով: 60. Ե՛վ Դատարանը, ե՛լ Հանձնաժողովը չեն կարող կիսել նման տեսակետները: Ակնհայտ է, որ դիմողների կարծիքով իրենք իրավունք ունեին ստանալու անհրաժեշտ թույլտվությունը՝ համաձայն համապատասխան օրենսդրական դրույթների: Դատարանի ձևավորված նախադեպի համաձայն վարչական մարմիններում թույլտվության հարցի հետ կապված վեճերում և Գոթայի վերաքննիչ դատարանում 1985թ. աճուրդի պայմանների օրինականության վերաբերյալ վեճերում վտանգված են եղել «քաղաքացիական իրավունքները և պարտականությունները» (տե՛ս, inter alia, նախ՝ 1984թ. հոկտեմբերի 22-ի Սրամեքի վճիռը: Շարքեր Ա, թիվ 84, էջ 17, կետ 34, և երկրորդ՝ 1987թ. ապրիլի 23-ի է՛լի և այլոց վճիռը: Շարքեր Ա, թիվ 117, էջ 16, կետ 32): Բացի դրանից, որևէ հիմք չկա կարծելու, թե դիմողները հրաժարվել են դատարան դիմելու իրենց իրավունքից, անգամ ընդունելով, որ դա թույլատրելի էր: 61. Ուստի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է երկու վարույթների համար:

Բ. Համապատասխանությունը 6-րդ հոդվածի 1-ին կետին

1. Հողամասը պահպանելու թույլտվության առնչվող վարույթը 62. Կառավարությունը համաձայն է, որ եթե Դատարանի կարծիքով հողամասը պահպանելու թույլտվության առնչվող վարույթի նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածի 1-ին կետը, դիմողներին չեն տրվել դրանում նշված երաշխիքները: Այնուամենայնիվ, Դատարանը պետք է համոզվի, թե արդյոք նրանց տրամադրվել է «դատարան դիմելու իրավունք», որը երաշխավորվում է այս դրույթներով (տե՛ս վերջին աղբյուրներից, վերը նշված Ալան Ջեքոբսոնի վճիռը: Շարքեր Ա, թիվ 163, էջ 21, կետ 75): 63. Համաձայն շվեդական օրենսդրության՝ խնդրո առարկա վեճը կարող է լուծել միայն Կառավարությունը՝ որպես վերջնական ատյան (տե՛ս վերը՝ կետ 33): Կառավարության որոշումները,

դրանց օրինականության տեսանկյունից , վերանայման ենթակա չեն ո՛չ ընդհանուր իրավասության, ո՛չ վարչական դատարանների, և ո՛չ էլ այլ մարմնի կողմից, որին կարելի է «ատյան» համարել 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար:Յետևաբար, այս իմաստով, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2. Հրապարակային դատաքննության բացակայությունը Գոթայի վերաքննիչ դատարանում⁶⁴. Գոթայի վերաքննիչ դատարանն առաջին և միակ ատյանն է, որ պետք է քններ դիմողների գանգատը 1985թ. հարկադիր աճուրդի դեմ: Յետևաբար, դիմողներն իրավունք ունեին այդ դատարանում հրապարակային դատաքննության, քանի որ չի կիրառվել 6-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ սահմանված որևէ բացառություն:⁶⁵ Կառավարությունը պնդել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներն այս հարցի առնչությամբ բավարարվել են, քանի որ դիմողները չեն պահանջել հրապարակային դատաքննություն՝ այսպիսով հրաժարվելով իրենց իսկ իրավունքից:⁶⁶ Դատաքննության հրապարակային բնույթը հանդիսանում է այն հիմնարար սկզբունքը, որն արտացոլվում է 6-րդ հոդվածի 1-ին կետում: Իսկապես, այս դրույթի ո՛չ տառը, ո՛չ ոգին չեն խոչընդոտում, որ անձն իր ազատ կամքով հրաժարվի իր գործի հրապարակային քննության իրավունքից՝ այդ մասին արտահայտվելով բարձրաձայն կամ լռելյայն (տե՛ս, inter alia, 1981թ. հունիսի 23-ի Լե Քոնպտի, Վան Լեվենի և Դե Մեյերի վճիռը: Շարքեր Ա, թիվ 43, էջ 25, կետ 59 և 1987թ. նոյեմբերի

30-ի Յ.Վ. Բելջիումի վճիռը: Շարքեր Ա, թիվ 127, էջ 36, կետ 54): Այնուամենայնիվ, հրաժարումը պետք է գերծ լինի երկիմաստությունից և չպետք է հակադրվի հասարակական շահին:⁶⁷ Ներկա գործով հստակ արտահայտված հրաժարում չի եղել: Հարցն այն է, թե այն կատարվել է լռելյայն: Թեև Դատարանի քննած որոշ նախկին գործերով վարույթի գաղտնիությունը բխել է օրենսդրությունից (տե՛ս վերը ի Լե Քոնպտի, Վան Լեվենի և Դե Մեյերի վճիռը: Շարքեր Ա, թիվ 43, և 1983թ. փետրվարի 10-ի Ալբերտի և Լե Քոնպտի վճիռը: Շարքեր Ա, թիվ 58), կամ պրակտիկայից (տե՛ս վերը՝ Յ.Վ. Բելջիումի վճիռը: Շարքեր Ա, թիվ 127), ներկա դեպքում շվեդական օրենքը հստակ կերպով նախատեսում է հրապարակային դատաքննության հնարավորություն: Դատավարության օրենսգիրքը Գոթայի վերաքննիչ դատարանին լիազորել է անցկացնել հրապարակային դատաքննություն «...երբ (այն) անհրաժեշտ է գործի քննության նպատակներով (տե՛ս վերը՝ կետ 39):Քանի որ դիմողների գանգատը հիմնականում վիճարկում էր 1985թ. աճուրդի օրինականությունը, և քանի որ Շվեդիայում նման դատավարությունները սովորաբար ընթանում են առանց հրապարակային լսումների, դիմողները կարող էին պահանջել նման լսումների, եթե անհրաժեշտ համարեին: Այնուամենայնիվ, նրանք այդպես չեն վարվել: Ուստի կարելի է համարել, որ նրանք առանց երկիմաստության հրաժարվել են Գոթայի վերաքննիչ դատարանում հրապարակային դատաքննության իրենց իրավունքից: Այս դատարանում նրանց նկատմամբ վերաբերմունքի շուրջ կասկածները սոսկ թվում է, թե առաջացել են Կոնվենցիայի մարմիններում իրենց գործի քննության ընթացքում: Գերագույն դատարան ներկայացրած իրենց գանգատում այս կապակցությամբ որևէ հիշատակում չի եղել (տե՛ս վերը՝ կետ 25): Բացի դրանից , հիմք չկա կարծելու, թե դատավեճը ներառել է հասարակական շահին առնչվող հարցեր, որոնք հրապարակային դատաքննությունն անհրաժեշտ կդարձնեին:⁶⁸ Յետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ հրապարակային դատաքննության պահանջի խախտում տեղի չի ունեցել:

IV. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

69. Դիմողները պնդել են, որ իրենք գրկված են եղել «պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից»՝ կապված իրենց կողմից վիճարկվող հարցերի հետ:Նկատի ունենալով 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա իրենց որոշումները, և՛ Դատարանը, և՛ Հանձնաժողովն անհրաժեշտ չեն համարում

գործը քննել նաև համաձայն 13-րդ հոդվածի, քանի որ վերջինիս պահանջները նվազ խիստ են, քան 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները և կլանվում են վերջիններովս (տե՛ս, որպես վերջին աղբյուր՝ վերը նշված Ալան Ջեքոբսոնի վճիռը: Շարքեր Ա, թիվ 163, էջ 21, կետ 78):

III. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառումը

IV.

70. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ իշխանության կայացրած որոշումը լիովին կամ մասնակիորեն չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված պարտականություններին, և եթե Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին տրամադրում է արդարացի բավարարում»: Դիմողները պահանջում են իրենց կրած վնասների և ծախսերի հատուցում:

Ա. Վնասը

71. Դիմողները նշել են, որ փոխհատուցման իրենց պահանջը հիմնված է հետևյալի վրա.ա. հողամասի ազատ շուկայական արժեքը (իրենց կողմից գնահատված 365000 SEK), որն աճել է տարեկան գնային ինդեքսին զուգահեռ, բ. գնահատման և աճուրդի ծախսերը (16 513.50 SEK , տե՛ս վերը՝ կետ 22),գ. ծառահատման ծախսերի հետ կապված անարդարացի կրճատումը (22000 SEK , տե՛ս վերը՝ կետ 21),դ. եկամտի կորուստը հողամասում իրենց աճեցրած եղևնիների վաճառքի ծախողման հետևանքով (675000 SEK, տե՛ս նույն տեղում):Այնուամենայնիվ, նրանք համաձայն են նվազեցնել այս պահանջը մինչև 84513.50 SEK , այսինքն՝ այն տարբերությունը, որ գոյություն ունի հողամասի դիմաց իրենց վճարած 240000 SEK-ի և դրա դիմաց ի վերջո իրենց ստացած 155486.50 SEK -ի միջև, եթե Դատարանը չգտնի, որ տեղի է ունեցել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:Երկու դեպքում էլ Շվեդիայի՝ Տոկոսադրույքի մասին օրենքի (rantelagen) համաձայն հաշվարկված տոկոսները պետք է ավելացվեն պահանջվող գումարին:72. Դատարանը համաձայն է Յաննա Ժոնսոնի և Կառավարության հետ այն հարցում, որ սույն վճռով ճանաչված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման և ենթադրյալ վնասի միջև որևէ կապ չկա: Հողամասը պահպանելու անհրաժեշտ թույլտվության մերժումը հնարավոր է, որ հանգեցրել է դիմողների ` որոշ դրամական կորստի, բայց Դատարանը չի կարող ենթադրություններ անել, թե ինչ արդյունք նրանք կարող էին ստանալ, եթե կարողանային գանգատ ներկայացնել դատարան:Ուստի ոչ մի հատուցում չի կարող տրվել:

Բ. Ծախսեր և ծախքեր

73. Դիմողները պահանջել են 151960 SEK՝ կապված ներպետական վարույթների և Կոնվենցիայի հաստատություններում գործի քննության ծախսերի հետ:Կառավարությունը թողնում է այս հարցի լուծումը Դատարանի հայեցողությանը:74. Հաշվի առնելով բոլոր հանգամանքները, հատկապես այն փաստը, որ ներկա վճիռը չի գրանցել տվյալ գործի, այն է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ գանգատի հիմնական ասպեկտի առնչությամբ ոչ մի խախտում, Դատարանը գտնում է, որ դիմողներն ունեն արդարացի հիմքով փոխհատուցման իրավունք 60000 SEK -ի չափով:

ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն վճռել է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի՝ ո՛չ առանձին, ո՛չ էլ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համադրությամբ, խախտում տեղի չի ունեցել, 2. Միաձայն վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն պատճառով, որ բացակայել է դիմողներին Ռիսբոկե 1:3-հողամասը պահպանելու թույլտվությունը մերժելու մասին որոշումները վիճարկելու կապակցությամբ դատական պաշտպանության հնարավորությունը, 3. վճռել է վեց ձայնով՝ ընդդեմ մեկի, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել Գոթայի վերաքննիչ դատարանում դատաքննության առնչությամբ, 4. Միաձայն վճռել է, որ հարկ չկա գործը քննել ըստ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, 5. Միաձայն վճռել է, որ Շվեդիան դիմողներին պետք է վճարի 60000 (վաթսուն հազար) շվեդական կրոն՝ ծախսերի և ծախքերի դիմաց, 6. Միաձայն մերժել է արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը: Կատարվել է անգլերենով և ֆրանսերենով, հրապարակվել է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1990թ. փետրվարի 21-ին:

Ռոլֆ

Ռիսդալ

Նախագահ

Քարտուղար

Մարկ-Անդրե Էյսեն

Համաձայն Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի՝ 2-կետի պրն Ուոլշի մասնակի չհամընկնող կարծիքը կցվում է վճռին:

ԴԱՏԱՎՈՐ ՌԻՆԸԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՀԱՍԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Ես ցավում եմ, որ իմ կարծիքը չի համընկնում Դատարանի մեծամասնության այն եզրակացությանը, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ հրապարակային դատաքննության վերաբերյալ դրույթը չի խախտվել:

2. Դատարանն ընդունել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է այս դեպքի նկատմամբ, և, քանի որ շվեդական օրենսդրությունը թույլ չի տալիս շվեդական կառավարության որոշումների նկատմամբ դատական վերահսկողություն, հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Այդ առումով Դատարանը մերժել է Կառավարության փաստարկն այն մասին, որ դիմողները հրաժարվել են Դատարան դիմելու իրենց իրավունքից, ընդունելով 1979թ. աճուրդի պայմանները, քանի որ չկար որևէ ապացույց, որ դիմողները հրաժարվել են դատարան դիմելու իրենց իրավունքից:

3. Ըստ իս, քանի որ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է դատարան դիմելու իրավունք, ապա այդ իրավունքից հրաժարումը հավաստող ապացույցի բացակայության դեպքում հարկավոր է կազմակերպել հրապարակային դատաքննություն: Ընդհանուր կանոնը հրապարակային դատաքննությունն է: Դատավարության օրենսգիրքը նախատեսում է հրապարակային դատաքննություն «երբ (այն) անհրաժեշտ է քննության նպատակներով»: Նման հայեցողությունն անհամատեղելի է 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, բացի այդ դրույթով նախատեսված որոշակի բացառություններից: Այս դեպքն այդ բացառություններից ոչ մեկի շրջանակներում չէ:

4. Ընդունելի է համարվել, որ հրաժարումը հստակ չի արտահայտվել: Այն փաստը, որ դիմողները հստակորեն չեն հրաժարվել հրապարակային դատաքննության իրենց իրավունքից, չի նշանակում, թե նրանք լռելյայն համաձայնել են հրապարակային քննությանը: Եթե ընդհանուր կանոնից շեղվելու մասին հստակ առարկություն չի եղել, ապա դա չի կարող համարվել նման շեղման ընդունում: Իմ կարծիքով, այս դեպքում այն արմատապես կձևափոխեր 6-րդ

հողվածի 1-ին կետի մեկնաբանումը, հրապարակային դատաքննության պահանջը կախված կլիներ հստակ արտահայտված կամ լռելյայն պահանջից: 6-րդ հողվածի 1-ին կետի հրապարակային դատաքննության պահանջն ամրագրված է Կոնվենցիայում, որովհետև այն կարևորում են Պայմանավորվող պետությունները, և ոչ, որովհետև մի կողմն է այն կարևոր համարում: Արդարադատության հրապարակային իրականացումը վիթխարի կարևորություն ունի յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության մեջ, և համարվում է Կոնվենցիայի հիմնաքարերից մեկը, որը երաշխավորում է արդարադատության անաչառ իրականացում և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանություն: Այն փաստը, որ տվյալ գործի կապակցությամբ հասարակությունը չի կարող որոշակի հետաքրքրություն դրսևորել, հիմնավորում չէ: Հավասարապես, եթե կողմերից մեկը կամ երկուսն էլ շահագրգռված չեն անցկացնել հրապարակային դատաքննություն, չի կարող հարցում որևէ փոփոխություն մտցնել: Միայն այն դեպքում, երբ երկու կողմերը համաձայն են ոչ հրապարակային դատաքննության, կարելի է հրաժարվել 6-րդ հողվածի 1-ին կետի պարտադիր դրույթներից: Երաշխավորված իրավունքից նման հրաժարումը պետք է արտացոլվի հստակ, ոչ երկիմաստ խոսքերով կամ գործողություններով, որից կարելի է հանգել միակ ողջամիտ եզրակացության, այն է, որ երկու կողմերը համաձայն են դրան: Ներկա դեպքում նման ապացույց գոյություն չունի: Ըստ իս, լռությունը չի կարող համարվել նման հրաժարում, հատկապես, երբ ինչպես այս գործում չի ապացուցվել, որ դիմողները երբևէ միասին կամ առանձին ունեցել են հրաժարվելու մտադրություն: Իմ կարծիքով, տեղի է ունեցել հրապարակային դատաքննության պահանջի խախտում: